Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՄՆԱՎՈՐ ՈՒՂԵՐՁ Է ՀՂԵԼ ԻՐԱՔԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնի առիթով մասնավոր ուղերձ է հղել Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպս. Անատուրյանին և ողջ իրաքահայ համայնքին: Ուղերձում մասնավորապես ասված է.

«Մենք շարունակում ենք աղոթել, որ խաղաղ կյանքը շուտով իր բնական հունը գտնի Իրաքի հնամյա հողի վրա, և երկիրը, որը դարերով հյուրընկալել է մեր ժողովրդի զավակներին, արագորեն վերագտնի իր կենսական ուժերը:

Հանապազ աղոթում ենք ամենքիդ համար, որ դուք արիանաք դժվարությունների և հոգսերի մեջ և հավատով զորացած՝ առաջնորդ, հովիվ և հոտ, նախնյաց աննկուն ոգով շարունակեք ապրել ու արարել և կենսունակ ու աշխույժ պահել համայնքային ձեր կյանքը՝ ի մխիթարություն և ուրախություն աշխարհասփյուռ մեր ժողովրդի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական ջերմ սիրով Մեր օրհնությունն ենք հղում ձեզ բոլորիդ՝ մաղթանքով, որ Տիրոջ Հրաշափառ Հարության շնորհները մշտամնա լինեն ընտանեկան ձեր հարկերում և համայնքային կյանքից ներս»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդառաջելով թեմական առաջնորդի և թեմական խորհրդի խնդրանքին և նկատի առնելով Իրաքում առկա ծանր իրավիճակը, արտոնել է Զատկի տոնակատարությունները կատարել հին տոմարով:

Զատկական Պատարագի ընթացքում՝ ապրիլի 27-ին, Իրաքի հայոց թեմի առաջնորդն ու եկեղեցական դասը իրաքահայ համայնքին կներկայացնեն նաև Վեհափառ Հայրապետի մասնավոր ուղերձը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ